


ՈՒՍՏՐԻ Ա. ՓՐԿԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ



ANNUAL

REPORT

1961

ARMENIAN CHURCH OF OUR SAVIOUR
87 SALISBURY STREET
WORCESTER, MASSACHUSETTS

ԱՂՈԹՔ ՏԱՐԵԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Շնորհէ մեզի, ով Տէր, որ Քու Սուրբ Հոգիդ առաջնորդ ըլլալ մեզի եւ արդիւնաւորէ մեր որոշումներն ու ծրագիրները մեր ծուխին բարիքին համար: Գոհութիւն կուտանք Քեզի բոլոր այն օրհնութիւններուն համար զորս մեզի պարգեւեցիր անցեալ տարուան ընթացքին, եւ կաղօթենք որ մենք, եկեղեցւոյ անդամներս, կարենանք միասնաբար գործել առաւել ոյժով եւ եռանդով յառաջիկայ տարեշրջանին:

Օգնէ մեզի, ով Տէր, որ մեր անձերը ընծայենք Քեզի եւ պատրաստ ըլլանք գոհելու մեր ժամանակը, դրամը եւ տաղանդը Քու Սուրբ Հոգիդ եւ Թագաւորութեանդ տարածման համար: Առաջնորդէ մեզ, կաղաչենք Քեզի, եկեղեցւոյս Միական Խորհուրդի եւ Վերստուգիչ անդամներու ընտրութեանց մէջ: Շնորհէ որ նոր ընտրուելիք անդամները հաւատարմութեամբ եւ սիրով կատարեն իրենց պարտականութիւնները:

Կը գովաբանենք Քեզ, Տէր Աստուած մեր, բոլոր այն ծառաներուդ համար որոնք անձնուիրաբար գործած են Քու Հոգեւոր այգիիդ մէջ ու պաշտած Քու Սուրբ Անունդ: Կը փառաբանենք Քեզ մանաւանդ անոնց համար, որոնք մեկնած են անդարձ եւ ննջած ի Քրիստոս: Անոնց յաւիտեանական հանգիստ պարգեւէ ով Տէր:

Ով Ամենակալ Տէր, Քու լոյսդ մշտապէս թող փայլի մեր վրայ եւ առաջնորդէ մեր քայլերը դէպի ճշմարտութեան ճանապարհը:

Դուն ով Տէր, գիտես մեր պէտքերը եւ կարիքները մեր խնդրածէն եւ հասկցածէն աւելի, եւ Քեզի, Որդիիդ եւ Ամենասուրբ Հոգիիդ հետ, կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

PRA YER FOR AN ANNUAL PARISH ASSEMBLY

Grant, O Lord, that thy Holy Spirit may preside over us now in all our concerns and deliberations for the welfare of this parish. We thank thee for all the blessings of the past year, and pray that we may go together from strength to strength in the year before us. Help us all to dedicate ourselves to thee, and to be ready to make sacrifice of time and money for the extension of thy kingdom.

Guide us, we beseech thee, in the ~~choies~~ choices of our Parish Council and Auditing Committee, and may they discharge their duties faithfully.

We praise thee for those thy servants who labored and worshipped here before us, and especially for those who have departed this life since we last met together. Grant to them eternal rest, O Lord, and let thy light perpetual shine upon them; through Jesus Christ our Lord.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հովիւի տարեկան տեղեկագիր - Հայերէն	էջ 1-2
Հովիւի տարեկան տեղեկագիր - Անգլերէն	3-5
Միական Խորհուրդի տարեկան տեղեկագիր - Հայերէն	6-9
Միական Խորհուրդի տարեկան տեղեկագիր - Անգլերէն	10
Ելեւմտից Հաշուեկշիռ - Անգլերէն	11-14
Տեղեկագիր Անդամարշաւի Յանձնախումբի	15
Եկեղեցասէր Տիկնանց Միութեան տեղեկագիր	16
Հայ Դպրոցի Խնամակալութեան տեղեկագիր	17
Կիրակնօրեայ Վարժարանի տեղեկագիր	18-19
Դպրաց Դասու տեղեկագիր	20
Երիտասարդ Տիկնանց Միութեան տեղեկագիր	21
Այրերու Ակումբի տեղեկագիր	22
էյ-Սի-Ուայ-Օ-էյ Կրօնագրութեան տեղեկագիր	23
էյ-Սի-Ուայ-Օ-էյ Երէցներու տեղեկագիր	24
Հայկական Զայնաստիւոյ Ժամուն Յանձնախումբի տեղեկագիր	25
Մշակութային Կեդրոնի Շինութեան Յանձնախումբի տեղեկագիր	26-27

CONTENTS

	Page
Pastor's Report (Armenian)	1-2
Pastor's Report (English)	3-5
Parish Council Report (Armenian)	6-9
Parish Council Report (English)	10-
Financial Report and Budget 1962	11-14
Membership Campaign Committee Report	15-
Ladies Auxiliary Report	16
Armenian School Council	17
Sunday School	18-19
Choir	20
Young Women's Guild	21
Men's Club	22
ACYOA Juniors	23
ACYOA Seniors	24
Armenian Radio Hour	25
Cultural Center Committee	26-27

ՀՈՎԻԻԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Սիրելի անդամներ,

Իբրեւ Աստուծոյ այգիին մշակները, հաւաքուած ենք այսօր վայելելու համար մեր տարեկան հունձքը որ ձեռք բերուեցաւ 1961 տարեշրջանին մեր բոլորին ջանքերով: Ներկայս մեր գործունէութեան ամիսի տեղեկագիրն է:

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ - Անցնող տարեշրջանին կանոնաւոր կերպով կատարուեցան մեր կրօնական պաշտամունքները: Ջանք տարած ենք որ մեր եկեղեցական արարողութիւնները կատարուին անթերի եւ հանդիսաւոր: Մեր կիրակնօրեայ պաշտամունքներէն զատ Ս. Պատարագ մատուցած ենք Հայկական Ծնունդի օրը, Վարդանանց եւ Համբարձման տօներուն առթիւ, Աւագ Հինգշաբթի օրը, ինչպէս նաեւ Ծնունդի եւ Ջատկի ճրագալոյցներուն: Մեծ Պահոց շրջանին ամէն Ձորեքշաբթի երեկոյ ունեցած ենք Խաղաղական ու Հանգստեան ժամերգութիւն. իսկ Գոհաբանութեան Տօնին նախօրեակին ունեցանք երեկոյեան ժամերգութիւն: Քարոզխօսութիւն կատարուած է ամէն Կիրակի անխափան:

Մեր ջերմագին գնահատանքը կը յայտնենք եկեղեցւոյս սարկաւազներուն եւ Դպրաց Դասի անդամներուն որոնք հաւատարմօրէն կը բերեն իրենց մասնակցութիւնն ու զմայլելի երգեցողութիւնը մեր պաշտամունքներուն:

ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ - Անցնող տարեշրջանին մեր եկեղեցւոյ մէջ կատարուած է 35 մկրտութիւն, 11 պսակ եւ 31 թաղում:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ - Ջանացած ենք չթերանալ ու ժամանակին կատարել մխիթարական ու ցաւակցական այցելութիւնները, մասնաւորաբար հիւանդանոցները: Տուած ենք ընդամէնը 460 այցելութիւններ հետեւեալ առիթներով: Հիւանդանոցներու 220, սգաւորներու 45, ծերանոցներ 25, ընտանեկան հարցերու վերաբերմամբ 6, քոյր եկեղեցիներու 10, իսկ տօնական եւ այլ առիթներով 154:

ԺՈՂՈՎՆԵՐ - Անցնող տարեշրջանին մեր եկեղեցւոյ գործերու կապակցութեամբ ներկայ եղած ենք շուրջ 135 ժողովներու:

ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԹԵՐԹԻԿԸ - Կանոնաւոր հրատարակած ենք եկեղեցւոյս թերթիկը Հայերէն եւ Անգլերէն լեզուներով: Զեռնարկներու եւ այլ առիթներով ղրկած ենք մասնաւոր յայտարարութիւններ:

ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՇՐՋԱԿԱՅ ՔԱՂԱՔՆԵՐԸ - Եկեղեցւոյս շրջակայ քաղաքներուն հետ մօտէն կապ պահած ենք եւ յաճախ այցելութիւն տուած: Մեծ Պահոց շրջանին Ս. Պատարագ մատուցած ենք Միլիցրտի եւ Ֆիչպըրկի մէջ, եկեղեցւոյս դպրաց դասի մասնակցութեամբ: Ֆիչպըրկի մեր սիրելի ժողովուրդին փախաքին ընդառաջելով այս տարի դարձեալ կազմակերպեցինք ամսական դասախօսական երեկոյթներ ղեկավարութեամբ Բարեշնորհ Յովհաննէս Սրկ. Գասպարեանի:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԵՅՎԸՐՀԻԼԻ ՄԷՋԻ - Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգով վերջին եօթը ամիսներուն Ս. Պատարագ մատուցած ենք Հէյվըրհիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ամիսը մէկ Կիրակի: Կը յուսանք որ Հէյվըրհիլի մեր քոյր եկեղեցին մօտ ապագային կունենայ իր մնայուն հովիւը:

ՀՈՎԻԻՆԵՐՈՒ ԹՈՒՆԱՆԱԿՈՒԹԻՒՆ - Ընթացիկ տարուան մէջ փոխանակուեցանք հետեւեալ հովիւներուն հետ: Հոգ. Տ. Մեսրոպ Վրդ. Սէմէրճեան, հոգեւոր հովիւ ՀարթՅըրտի Ս. Գէորգ եկեղեցւոյ, Արժ. Տ. Տաճատ Քհնյ. Դաւիթեան, հոգեւոր հովիւ Պըրկըն Քաունթիի, Ն.Ճ., եւ Արժ. Տ. Կարէն Քհնյ. Կտանեան, հոգեւոր հովիւ Նիւ Եորքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ: Պատգամաւորական ժողովին առթիւ մեր եկեղեցւոյ մէջ պատարագեց Արժ. Տ. Տաճատ Քհնյ. Դաւիթեան. իսկ օրուան քարոզը խօսեցաւ Հոգ. Տ. Գարեգին Մ. Վրդ. Գազանճեան, հոգեւոր հովիւ Վաշինկթընի:

ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ — Ընթացիկ տարուան մէջ Սեպտեմբերէն սկսեալ կը հետեւինք կրօնական կարգ մը դասընթացքներու Պոստոն Եուիվըրսիթիի Աստուածաբանական Դպրոցին մէջ:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ — Ներկայ եղանք մեր Թեմին Պատգամաւորական Ժողովին, որ տեղի ունեցաւ 1961 Ապրիլ 29-30 Պոստոնի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ նորակառոյց Մշակութային Կեդրոնին մէջ: Պատգամաւորական Ժողովի նախորդող 2 օրերուն տեղի ունեցաւ Հոգեւորականաց Ժողովը նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, եւ ներկայութեամբ շուրջ 30 հոգեւորականներու եւ ընծայացու ուսանողներու: Հոգեւորականաց սոյն Ժողովին անարժանաբար Ատենապետ ընտրուեցանք:

ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆԱՑ ԽՄԱՌՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ — Անցեալ ամառ ներկայ եղանք Բարեշնորհ Յովհաննէս Սրկ. Գասպարեանին հետ Հոգեւորականաց Ամառնային Համագումարին, որ տեղի ունեցաւ Յուլիս 10-14 էլպրօն, Նիւ Ճըրզի, Եկեղեցւոյ շէնքին մէջ: Նիստերուն նախագահեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Սոյն համագումարին ներկայ եղան շուրջ 25 հոգեւորականներ եւ ընծայացու ուսանողներ: Եղան դասախօսութիւններ, ինչպէս նաեւ շինիչ ու օգտակար խորհրդակցութիւններ մեր ծխական գործերու վերաբերմամբ:

ԴՊՐԱՑ ԴԱՍԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ — Շուրջ 2 տարիէ մաս կը կազմենք Դպրաց Դասերու Միութեան Կեդրոնական Խորհուրդին եւ կը բերենք մեր ծառայութեան համեստ բաժինը Խորհուրդի աշխատանքներուն: Այս հանգամանքով ներկայ եղանք Միութեան տարեկան համագումարին, որ տեղի ունեցաւ 1961 Յուլիս 1-2 Տիթրոյիթի Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ Մշակութային Կեդրոնին մէջ: Սոյն համագումարին ներկայ եղան նաեւ մեր Եկեղեցւոյ կողմէ իբրեւ դպրաց դասի պատգամաւորներ, Բարեշնորհ Յովհաննէս Սրկ. Գասպարեան, Տիկին Րօզ Գինոսեան եւ Զարլի Ղուկասեան:

Սոյն պատեհ առիթով պարտ կը զգանք ու հաճոյքով կը գնահատենք Եկեղեցւոյս Միական Խորհուրդը, Թեմական պատգամաւորները, բոլոր ենթակայ մարմիններն ու յանձնախումբերը որոնք իրենց ազնիւ գործակցութեամբ ջանացին առաւելագոյն չափով արդիւնաւորել մեր աշխատանքներն ու ձգտումները յօգուտ մեր Սուրբ Եկեղեցւոյ: Ջերմապէս կը գնահատենք նաեւ մեր սիրելի ժողովուրդը որ ամէն կերպով աջակցեցաւ մեզի եւ զօրավիգ եղաւ մեր նպատակներու իրագործման: Բոլորին կը մաղթենք հոգեկան այն երջանկութիւնը որ բարի գործ կատարողներու լաւագոյն վարձատրութիւնն է:

Մասնաւոր շնորհակալութեան ու գնահատանքի խօսք ունինք Հովիւի նուիրեալ օգնականին մեր սիրելի եղբօր Բարեշնորհ Յովհաննէս Սրկ. Գասպարեանին համայնքիս մատուցած իր օգտակար եւ բազմապիսի ծառայութեանց համար: Յոյժ գնահատելի են իր կազմակերպչական ճիգերը:

Նոր Տարւոյ սեմին մեր բոլորին գերագոյն ու նուիրական պարտականութիւնը պէտք է ըլլայ անդրադառնալ այն հսկայ աշխատանքին ու նուիրումին որ մեզմէ իւրաքանչիւրը պիտի բերէ յառաջիկային Աստուծոյ օգնութեամբ եւ առաջնորդութեամբ մեր Սուրբ Եկեղեցւոյ պայծառութեան ու բարգաւաճման համար: Բոլորս ալ առաւել կամ նուազ պաշտօններ ունինք այս համայնքին մէջ. մեր Հայրերու Ս. հաւատքը եւ մեր ազգային ժառանգութիւնները պահելու ու յաւերժացնելու համար: Աստուծոյ այգիին մէջ ջանանք ըլլալ հաւատաւոր օգտակար ու բարի մշակներ եւ լաւագոյնս արդիւնաւորենք մեր պարտականութիւնները: Մեր նախահայրերը հաւատքով ապրեցան, ստեղծագործեցին ու կտակեցին իրենց մտքին ու հոգիին արդիւնքները: Դարունակ ենք անոնց սուրբ գործը եւ նախանձախնդիր ըլլանք մեր հոգեւոր ժառանգութեանց պահպանման:

Ներկայիս մեր Եկեղեցւոյ ամէնէն հրատապ հարցը Մշակութային Կեդրոնի մը պէտքն է: Ջանանք մեր լուրջ մտածողութեան առարկայ ընել այս խնդիրը եւ նուիրենք մեր բոլոր ջանքերը այս կոթողական գործին յաջողութեան համար: Մշակութային Կեդրոնի շինութիւնը անյետաձգելի պահանջ մըն է մեր համայնքին համար:

Սրտագինս կաղօթենք որ Աստուծոյ Հովանին անպակաս ըլլայ ձեր վրայէն, օրացնէ զձեզ, աւելցնէ ձեր երանդը եւ օրհնէ ձեր սրտին ու մտքին աշխատանքը:

Եղիշէ Վարդապետ Կիզիրեան

ANNUAL REPORT 1961

VERY REV. YEGHISHE GIZIRIAN

DEAR PARISHIONERS:

Another year has passed and we are now embarking upon a new chapter in our community life. Through the grace and guidance of God, the accomplishments of 1961 were unquestionably the fruit of your zealous and conscientious support of our church. These achievements definitely stand out as enormous contributions.

There is justifiable reason for gratification with our program during the past year. There has been an appreciable increase in our family membership; enthusiastic interest on the part of our young people is noteworthy; programs and activities were truly outstanding and meaningful. We can definitely record a year of successful efforts. Our goals must have no limitations, because there is no finality in the service to God and to the life of our church. Spiritual satisfaction derived from this service is unmeasurable and boundless. How gratifying it is to view the fruitful harvest of a year's endeavors and to welcome the challenge and demands of the year ahead of us. I shall now submit a brief summary of some of my activities during the past year.

CHURCH SERVICE - Church services were held regularly every Sunday and on special occasions, namely: Armenian Christmas on January 6th, the Feast of St. Vartan, Lenten Services every Wednesday evening, the Feast of the Ascension. During each service an appropriate Sermon and interpretation was given. All Services were conducted with solemnity and dignity. Special thanks are due our Deacons, our Choir Master and Choir members for their faithful participation in the Church Services.

SACRAMENTS - As a matter of record we had 35 Baptisms, 11 Marriages, and 31 funerals. Necessary advice and counseling are always given at these occasions.

VISITATIONS - This is a very important service for cementing good relationship between the church and its members which I rendered to the very best of my ability with warmth and understanding. During the year I made 460 calls in the following areas: 220 sick calls; 45 calls to the homes of bereaved; 25 calls to the Homes for the Aged; 6 calls pertaining to family difficulties; 10 visits to other communities for purposes of church fellowship; 154 miscellaneous occasions.

MEETINGS - I attended 135 meetings connected with our church activities and gave advice and guidance as needed.

THE MESSENGER - This paper is published every month by our church and mailed to the entire membership and other parishes in our Diocese. Every effort is made to present current and timely news and topics of interest to our membership. In addition, we send out special announcements on numerous occasions.

OUTLYING COMMUNITIES - As in the past, our interest is actively maintained in every possible way to meet the needs of our surrounding communities. The Fitchburg community held monthly cultural programs and church services sponsored by the Armenian Educational Organization under the able guidance of the assistant to the Pastor, Deacon Hovhannes Kasparian.

PERSONAL EDUCATIONAL ENRICHMENT - This year I attended the Theological School at Boston University in order to broaden further my religious background. Six hours each week were devoted to these courses at the University, and countless hours in addition were spent in Study and activity. Next semester, I shall continue with this program on the same basis.

VISITING CLERGYMEN TO OUR PARISH - We were privileged to have as guest clergymen in our church on several occasions: The Rev. Dajad Davidian of Bergen County, New Jersey, guest celebrant; the Very Rev. Karekin Kazanjian of Washington, D.C., guest preacher; and Very Rev. Mesrob Semerjian of Hartford, Conn., guest celebrant. Exchange of Divine Liturgy celebrants took place with Very Rev. Mesrob Semerjian, Rev. Dajad Davidian and Rev. Garen Gdanian of New York.

CENTRAL COUNCIL OF THE ASSOCIATION OF ARMENIAN CHURCH CHOIRS - As advisor to this group, I attended regular meetings where we discussed all matters pertaining to the activities of this Association. In my capacity, I attended the Annual Convention of the Association of Armenian Church Choirs which took place in Detroit over the July 4th weekend.

DIOCESAN CONVENTION AND CLERGY CONFERENCE - As a delegate, with other delegates from our church, I attended the Diocesan Convention which was held in Boston, on April 29-30, at Holy Trinity Armenian Church in Cambridge, Mass. I also shared the secretarial duties with Dr. Ara Avakian at this convention. I also attended the Clergy conference, which preceded the Diocesan Convention and at which I served as chairman.

SPECIAL ASSIGNMENT - His Grace Archbishop Sion Manoogian, Primate of our Diocese, has assigned me to conduct services in Haverhill at St. Gregory the Illuminator Armenian Church once a month. For the past 6 months I have visited this church as scheduled.

ARMENIAN FOLK FESTIVAL - The climax of our church program for 1961 was reached on the tremendous success of our Folk Festival which took place on April 23, 1961, at the Worcester Municipal Auditorium. We will long remember this outstanding occasion. It will go down in the history of our church as one of the glowing lights among our many and varied successes. All of you deserve a vote of praise and thanks for your zealoussness and magnificent cooperation.

APPRECIATION - To the Parish Council, Diocesan Delegates, Auditing Committee, Membership Committee, Cultural Center Committee, Diocesan Auxiliary, and all of our church organizations, namely: Ladies Auxiliary, Young Ladies Guild, Men's Club, Choir, Armenian Church Youth Organization, (Senior and Junior), Armenian School and its council, Sunday School, and the Parent Teachers Association. I extend my boundless gratitude and appreciation for their ardent dedication and indispensable efforts on behalf of our church. May God continue to guide and inspire them for even greater productivity.

For Deacon Hovhannes Kasparian, Assistant to the Pastor, we reserve a particular place in our hearts. His many faceted talents have been invaluable. We have all benefited from his unselfish dedication.

To all of you who have contributed so unstintingly to the wonderful successes of the past year, I offer my personal thanks and gratitude. Despite the fact that there are still tremendous strides to be made for the welfare of our church, what needs to be done and what can be done must be built upon the structure of our firm foundation. Let us resolve to intensify our efforts in the service of our church, to enkindle the flame of our faith in the precepts of our enlightened forefathers. They served their church without bargaining and questioning, and made sacrifices with humility and unselfishness. Let their devotion and consecration be our example for the greater glory of God.

RECOMMENDATION

Our Cultural Center project is still the shining star in our future plans. The committee has been working diligently on plans which, when formulated, will encompass a structure to meet our total needs. This project is a vital factor which will crown our dreams. It is of supreme importance that we provide a physical plant which will adequately furnish quarters for our expanding activities. 1962 should see a tangible step forward toward laying the cornerstone for our new Cultural Center. This is a historic opportunity. Our Building Committee has been investigating all possible channels and is deserving of special commendation.

As we begin a new year, I ask your prayers to God for guidance and inspiration in the fulfillment of my responsibilities in the service of our Holy Church.

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Սիրելի անդամներ,

Ծխական Խորհուրդը պատիւն ունի ներկայացնելու ձեզի 1961 տարեշրջանի իր գործունէութեան տեղեկագիրը նիւթական ու բարոյական երեսներուն մէջ:

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԱԶՄԸ — 1961 ճետրուար 14-ին Ծխական Խորհուրդի տասնըմէկ անդամները լիագումար նիստին մէջ քաղտնի քուէով ընտրեցին իրենց դիւանը, ըստ հետեւեալին. —

- Ճօրճ Հերոսեան, Ատենապետ
- Մանասէ Ճարտարեան, Ատենադպիր
- Ճան Թօրոմանեան, Գանձապահ
- Թորգոմ Խուլոյեան, Ռոխ ատենապետ
- Չաւէն Գասպարեան, Ռոխ ատենադպիր
- Բիթըր Նալպանտեան, Ռոխ գանձապահ
- Միքայէլ Խօլլիկեան
- Կիլպըրդ Մարգարեան
- Ասպետ Չաքարեան
- Չարլի Կարապետեան
- Հայկ Մեսրոպեան

ՀՈՎԻՒՒ ՕԳՆԱԿԱՆ — Հովիւի օգնական Բարեշնորհ Յովհաննէս Սրկ. Գասպարեան կը շարունակէ իր պաշտօնը պարտականութեան լաւագոյն գիտակցութեամբ եւ ձեռնհասութեամբ: Ան ստանձնած է նախանցեալ տարիներուն նման տնօրէնութիւնն ու ղեկավարութիւնը եկեղեցւոյս Հայ եւ Կիրակնօրեայ վարժարաններուն, դպրաց դասին եւ Հայկական Զայնասփիւռի ժամուն: Ջերմապէս կը գնահատենք իր կազմակերպչական ճիգերը:

ԵՆԹԱԿԱՅ ՄԱՐՄԻՆՆԵՐ — Ծխական Խորհուրդը սերտ կապ պահած է եկեղեցւոյս ենթակայ բոլոր մարմիններուն հետ եւ քաջալերած է անոնց ձեռնարկները: Շատ բաղդաւոր ենք որ մեր եկեղեցին շրջապատուած է գործօն մարմիններով որոնք մեծ նուիրումով եւ նախանձախնդրութեամբ յառաջ կը տանին եկեղեցւոյ գործերը: Եկեղեցւոյս ենթակայ մարմիններն են, Երէց եւ Կրտսեր Տիկնանց Միութիւններ, Արանց Ակումբ, Դպրաց դաս, Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութիւն (Եյ-Սի-Ուայ-Օ-Եյ) եւ Առաջնորդարանի Օժանդակ Միութիւն:

ՀԱՅ ԴՊՐՈՑ — Մեր ջերմ գոհունակութիւնը կը յայտնենք եկեղեցւոյս Հայ Դպրոցի արդիւնքին մասին: Աշակերտութեան թիւը կը հաշուուի շուրջ 93 հոգի: Դասաւանդութիւնը տեղի կունենան ամէն Ուրբաթ երեկոյ ժամը 4-6: Հայ Դպրոցի մէջ կուսուցուի Հայերէն լեզու, Հայոց Պատմութիւն եւ Ժողովրդական երգեր: Կը պաշտօնավարեն 5 ուսուցիչներ: Հայ Դպրոցին տարեկան ծախսն է շուրջ 2000 տոլար: Սոյն գումարը կը գոյանայ նուէրներէ եւ ձեռնարկներէ:

Անցած տարեշրջանին Հայ Դպրոցին մաս կը կազմէր նաեւ շուրջ 90 Իոթրիկներէ բաղկացած Գեղջկական Պարախումբ մը որ Տիկին Վարդուհի Դաւիթեանի ղեկավարութեամբ բազմաթիւ ձեռնարկներու Կայլ տուաւ: Մեր ջերմագին գնահատանքը կը յայտնենք վարժարանի տնօրէնին, ուսուցիչներուն եւ խնամակալութեան անդամներուն իրենց ազնիւ եւ զոհաբերող ջանքերուն համար:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ — Ուրախ ենք յայտնելու որ եկեղեցւոյս Կիրակնօրեայ վարժարանը շատ լաւ կազմակերպուած է: Աշակերտութեան թիւն է շուրջ 262 հոգի: Կը պաշտօնավարեն աւելի քան 40 ուսուցիչներ եւ օգնականներ: Մեր խորին գնահատանքը կը յայտնենք վարժարանին տնօրէնին, Կրտսեր տնօրէնին եւ ուսուցիչներուն իրենց օգտակար եւ բարձր ծառայողական համար:

ԱՆԴԱՄԱՐՇԱԽ - Այս տարի դարձեալ անդամարշաւ կազմակերպեցինք: Յանձնախումբը ատենապետութեամբ Պրն. Զաւէն Գասպարեանի, նամակով, հեռախօսով եւ այցելութեամբ դիմում կատարեց մեր ծխականներուն անդամ արձանագրելու համար: Իսկ տրատու անդամներուն ալ Մխական Խորհուրդի կողմէ մասնաւոր կոչ ղրկուեցաւ որպէսզի աւելցնեն իրենց տարեկան խոստումը (իւլէն): 1961 տարեշրջանին մեր տրատու անդամներուն թիւը եղած է շուրջ 600 հոգի: Շաբաթական ու տարեկան խոստումներէն գոյացած է 13.600 տոլար: 1962 տարեշրջանին համար ցարդ խոստում եղած է շուրջ 10,000 տոլար:

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք բոլոր անոնց որոնք բաժին առին այս անդամարշաւին մէջ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ - Եկեղեցւոյս 1961 Յունիս 10-ին գումարուած ծխական բացառիկ ժողովը վաւերացուց Շինութեան Առժամեայ Յանձնախումբին տեղեկագիրը Մշակութային Կեդրոնի մը շինութեան շուրջ եւ միաձայնութեամբ լիազօրութիւն տուաւ Մխական Խորհուրդի եւ Թեմական պատգամաւորներուն որ ընտրեն Մնայուն Շինութեան Յանձնախումբ մը:

Ընտրուած անդամներն են, Տիարք Կիլպըրդ Մարգարեան, Ատենապետ, Թորգոմ Խուլոյեան, Ատենադպիր, Պարթեւ Տէր Պաղտասարեան, Գանձապահ, Ճօրճ Ժամկոչեան, Խոխ ատենապետ, Տիկին Մէրի Սողիկեան, Փոխ ատենադպիր, Զարլի Կարապետեան, Փոխ գանձապահ, Արա Երէցեան, Լրատու, եւ Ճօրճ Եղճեան, Օրինական խորհրդատու:

Շինութեան Յանձնախումբի տեղեկագրին համաձայն Մշակութային Կեդրոնը պիտի պարունակէ, 20-25 դասարաններ Հայ եւ Կիրակնօրեայ վարժարաններուն համար, մեծ սրահ մը շուրջ 750 հոգի նստելու տարողութեամբ, լայն խոհանոց մը, գրասենեակներ, դպրաց դասի սենեակներ, գրադարան, մատուռ եւ այլ սենեակներ տարբեր նպատակներու համար:

Շինութեան Յանձնախումբին Թափաքով Պրն. Բէյմըն Յովսէփեան պատրաստեց Մշակութային Կեդրոնի յատակագիծ մը, որուն համաձայն շէնքը պիտի ըլլայ 210 ոտք երկայն եւ 72 ոտք լայն: Շէնքին տարածութիւնը պիտի ըլլայ 26.000 քառակուսի ոտք:

Յանձնախումբին թելադրութիւնն է որ սոյն Կեդրոնի շինութեան ընթացք չտրուի մինչեւ որ ապահովուի շէնքին ընդհանուր ծախսին հարիւրէն յիսունը եւ Մխական ժողովին բացարձակ հաւանութիւնը: Մշակութային Կեդրոնի շինութեան համար կը նախատեսուի շուրջ 400,000 տոլար:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ - Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգին ընդառաջելով կազմեցինք Մայր Եկեղեցւոյ Շինութեան Օժանդակ Յանձնախումբ մը հետեւեալ անդամներով: Պրն.թ. Յարութիւն Սողիկեան, Ատենապետ, Ճօրճ Ժամկոչեան, Խոխ ատենապետ, Պարթեւ Տէր Պաղտասարեան եւ Տիկին Արմենուհի Ճարտարեան, Ատենադպիրներ Հայերէն եւ Անգլերէն արձանագրութեանց համար, Սիմոն Զաքարեան, Գանձապահ, Տօքթ. Հրանդ Սանթրոյեան, Խոխ գանձապահ, Ճօրճ Հերոսեան, Թորգոմ Խուլոյեան եւ Միքայէլ Խօլլիկեան, Խորհրդականներ:

Առաջնորդարանը Մայր Եկեղեցւոյ շինութեան համար մասնաւոր քօթաներ սահմանած է Թեմիս բոլոր ծուխներուն համար: Մայր Եկեղեցւոյ շինութիւնը պիտի արժէ շուրջ մէկ միլիոն տոլար:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔ — Եկեղեցւոյ Մխական Խորհուրդի խնդրանքով եւ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեանի բարեհաճ կարգադրութեամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծուծիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս առանձին կոնդակներով վարձատրեց եկեղեցւոյ զոհաբեթող անդամներէն Բարեշնորհ Հայկազ Արկ. Սանթրոյեանը եւ Պրն. Սեդրակ Տէր Պաղտասարեանը ի գնահատութիւն իրենց կատարած երկարամեայ եկեղեցանուէր ու ազգանուէր գործունէութեանց: Հայրապետական սրբատառ կոնդակները կարդացուեցան Հովիւին կողմէ Ս. Աստուածածնի Վերահոխման Տօնին օրը: Պատարագէն անմիջապէս ետք հիւրասիրութիւն տեղի ունեցաւ ի պատիւ Հայկազ Արկ.ին եւ Պրն. Սեդրակ Տէր Պաղտասարեանին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՅՆԱՍՖԻԼԻ ԺԱՄ — Հայկական Զայնասփիւռի ժամը կը վայելէ Ս. Պրկիչ Եկեղեցւոյ հովանաւորութիւնը վարչութեանը ներքեւ եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան: Սոյն Զայնասփիւռի ժամը երեքուկէս տարիէ ի վեր դարձած է բարերար միջոց մը ծանօթացնելու համար մեր Հայ եւ օտար ունկնդիրներուն Հայ մշակոյթն ու մեր ցեղին անգին արժէքները: Զայնասփիւռի ժամուն տարեկան ծախսն է շուրջ 1300 տուար: Ջերմապէս կը գնահատենք Զայնասփիւռի ղեկավարն ու յանձնախումբի անդամները մշակութային այս մեծ ծառայութեան համար:

Զ ԵՆԱՐԿՆԵՐ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ — Ապրիլ 23-ը պատմական ու նշանակալից օր մը պիտի մնայ Ուստրի Հայութեան համար: Սուրբ Պրկիչ Եկեղեցւոյ կողմէ կազմակերպուած Հայ Մշակոյթի ճուղահանդէսը կատարեալ յաջողութիւն մը եղաւ: Շուրջ տասը հազար հայեր նիւ ինկլընտի զանազան քաղաքներէն եկան վայելելու այս բացառիկ ձեռնարկը, որ տեղի ունեցաւ քաղաքիս մեծ Օտիթորիումին մէջ: Օտարներու աչքով Հայութիւնը հոն էր իր արուեստով, մշակոյթով եւ հայկական բազմաբնուէր ուտեստներով: Ջերմապէս գնահատանքի արժանի են բոլոր անոնք որ տրամադրեցին իրենց տաղանդը, ժամանակը, աշխատանքն ու թանկարժէք հնութիւնները:

2. ՃԱՇԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻՒ ԳԵՐՇ. Տ. ՄԱՄԱՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՏԱԵԱՆԻ — 1961 Մայիս 21-ին մեծարանքի շքեղ ճաշկերոյթ մը տրուեցաւ Ամերիկահայոց Նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Մամբրէ Արքեպիսկոպոս Գալտեանի: Սրբազան Հայրը Նոյն օրը առաւօտուն Ս. Պատարագ մատոյց եւ քարոզեց մեր եկեղեցւոյ մէջ: Ճաշկերոյթին առիթով, հովիւը համայնքին անունով ներկայացուց Սրբազան Հօր յուշամատեան մը եւ արժէքաւոր նուէր մը:

Սրբազան Հօր վախճանումը խորունկ վիշտ պատճառեց մեր ժողովուրդին: Օրհնել ըլլայ իր բարի յիշատակը:

3. ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ — Նախանցեալ տարիներու նման այս տարի եւս Մխական Խորհուրդի հովանաւորութեամբ Առաջնորդարանի Օժանդակ Միութիւնը մշակութային շքեղ տօնակատարութիւն մը ունեցաւ Հոկտեմբեր 15, Թարգմանչաց Տօնի Կիրակին: Այս տարուան ձեռնարկը նուիրուած էր Ս. Մեսրոպի յիշատակին, իր ծննդեան 1600-ամեակին առթիւ: Օրուան յայտագրին մէջ բաժին առաւ Պոստոնէն յայտնի երգչուհի Օր. Վիթթօրիա Սամուէլեան: Իսկ յայտագրին գլխաւոր ներկայացուցիչը եղաւ Ս. Մեսրոպի "Տեսիլք"ը: Ջերմապէս գնահատելի են Միութեան անդամները Հայ Մշակոյթը փառաւորելու իրենց ճիգերուն մէջ:

4. ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ — Մխական Խորհուրդը եկեղեցւոյ ենթակայ մարմիններուն գործակցութեամբ դաշտահանդէս մը տուաւ Կիրակի, Օգոստոս 27-ին Արարատ Դաշտավայրին մէջ: Զեռնարկը շատ արդիւնաւոր անցաւ:

ԺՈՂՈՎՆԵՐ — Մխական Խորհուրդը անցնող տարեշրջանին գումարած է 28 հերթական, 3 խառն եւ 3 ծխական ժողովներ:

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Քլինթոնն էն Տէր եւ Տիկին Կարապետ Պետրոսեան եկեղեցւոյ 3 յիշատակի պատուհաններու նկարազարդ ապակիներու պատրաստութեան համար նուիրած են 4300 տոլար:
2. Տէր եւ Տիկին Մէնծօ Մէնծօեան եկեղեցւոյ Քորանի նոր վարագոյրին համար նուիրած են 500 տոլար:
3. Նորուգ Քընթիթէթէն, Պրն. Անդրանիկ Խաչատուրեան նուիրած է եկեղեցւոյ խորհրդարանի համար գեղեցիկ գրասեղան մը:
4. Եկեղեցւոյ Արանց Միութիւնը նուիրած է 325 տոլար արժողութեամբ Միմիոկրաֆի գեղեցիկ մեքենայ մը: Միութիւնը անցնող աշնան իր ծախսով եւ աշխատանքով կանանչազարդեց եկեղեցւոյ շրջափակը:

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք վերոյիշեալ նուիրատուներուն:

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵԼԵՒՄՈՒՏՔԸ — Վերստուգիչ Յանձնախումբի ներկայացուցած տեղեկագրին համաձայն 1961 տարեշրջանի մեր եկեղեցին մուտք ունեցած է 43,556,31 տոլար իսկ ելք 35,213,56 տոլար:

1962 տարեշրջանի համար մեր եկեղեցւոյ պիտոճէն կը նախատեսուի 30,900 տոլար:

ԳՆԱՀԱՏԱՆՔ — Ծխական Խորհուրդը իր սրտագին շնորհակալութիւնն ու գնահատանքը կը յայտնէ եկեղեցւոյ ենթակայ բոլոր մարմիններուն ու մեր սիրելի ժողովուրդին որոնց ազնիւ գործակցութեան շնորհիւ Աստուծոյ փառքին ու մեր Սուրբ Եկեղեցիին յաւերժացման համար տրուած մեր ջանքերէ: ու աշխատանքները արդիւնաւոր ընծայուեցան:

Ի դիմաց Ծխական Խորհուրդի

Եղիշէ Վարդապետ Կիզիրեան
Նախագահ

Մանասէ Ճարտարեան
Ատենադպիր

Ճօրճ Հերոսեան
Ատենապետ

ARMENIAN CHURCH OF OUR SAVIOUR ANNUAL REPORT

We are pleased to report that 1961 was spiritually, culturally, socially and financially a most active year for the Armenian Church of Our Saviour.

Under the Presidency of our Pastor, Very Rev. Yeghishe Gizirian, your Parish Council was comprised of Messrs. George A. Herosian, Chairman; Torcom Hooloian, Vice Chairman; Manase Jardarian, Recording Secretary; Zarven Kasparian, Assistant Secretary; John Toromanian, Treasurer; Peter Nalbandian, Assistant Treasurer; Asbed Zakarian, Haig Mesrobian, Charles Garabedian, and Michael Koligian; Advisors.

We have served our tenure of office with great pride and devotion and genuine humility. We met regularly on Tuesday evenings and we endeavored at all times to handle the administration and financial matters of our Church to the best of our ability.

April 23rd, 1961, shall always remain in the hearts of all Armenians everywhere. On this day we sponsored an Armenian Folk Festival at the Municipal Auditorium which was attended by close to 10,000 people. The combined efforts of all our Church organizations and the various dedicated people who contributed so much of their time and themselves made this tremendous undertaking the success that it was.

We had the privilege of sponsoring a Testimonial Banquet for our late, beloved Archbishop Mampre Calfayan. This turned out to be our final gesture to a man who spent his life's energies and all his wisdom to the furtherment of our Religion and Culture.

Our picnic of this year was the first of its kind as it took place at Ararat Camp in Maynard, Mass. Needless to say, it was the most financially successful single undertaking of the Council.

In August of this year, in grateful recognition of their devoted and faithful service to the Church and Community, Messrs. Deacon Haigaz Santoian and Setrag Der Bagdasarian became the recipients of an Encyclical from His Holiness, Vasken the First, Supreme Patriarch and Catholicos of all Armenians. Upon recommendation, the Council shall bestow this honor on others who have led a life of dedication and devotion to our Church and to the Armenian people.

Yeasterdays dream of a Community Center became a reality this year by the formation of a Permanent Building Committee. This task that lies before us requires every ounce of our energies, as well as a deep sense dedication and cooperation on our parts. With the help of Almighty God may we reach our goal.

In closing, may I say that it is a great pleasure and honor for me to serve on our Parish Council. The friendships I have developed with my colleagues has been invaluable to me, and with the constant guidance and understanding of Hayr Sourp Gizirian we have reached the climax of a most rewarding year. To Diratzoo Kasparian, we extend our sincerest thanks and appreciation for all his assistance.

Respectfully Submitted,
George A. Herosian,
Parish Council Chairman

ARMENIAN APOSTOLIC CHURCH OF OUR SAVIOUR

ANALYSIS OF INCOME - 1961

A. MEMBERSHIP:			
1. Pledges (Weekly Envelopes)		8,115.40	
2. Pledges (Annual)		5,496.70	
3. Plate		1,927.01	
4. Sunday School		860.40	
5. Yoohakin		2,251.60	
6. Pledges (Envelopes 1960)		<u>579.20</u>	
			19,230.31
B. SERVICE:			
1. Hokehankist		2,993.00	
2. Momakin		649.00	
3. Baptism		425.00	
4. Weddings		460.00	
5. Funerals		<u>1,330.00</u>	
			5,857.00
C. GIFTS & BEQUESTS:			
1. Gifts		569.00	
2. Bequests		917.68	
3. In Lieu Of Flowers		4,107.35	
4. Hall Donations		300.00	
5. Flowers		61.30	
6. Fitchburg Education Organization		<u>100.00</u>	
			6,055.33
D. AFFAIRS			
1. Annual Picnic		1,835.43	
2. Folk Festival		2,721.45	
3. Archbishop Calfayan Banquet		<u>379.00</u>	
			4,935.88
E. AUXILIARY ORGANIZATIONS			
* 1. Ladies Aid Society		1,000.00	
* 2. Young Women's Guild		2,000.00	
Total For Building Fund		<u>3,000.00</u>	
F. SPECIAL FUNDS:			
1. Diocesan Fund From A.C.Y.O.A.		50.00	
2. Building Fund		50.00	
3. Stained Glass Window		<u>4,300.00</u>	
			4,400.00
G. OTHER SOURCES:			
1. Mortgage (Old Church-Final)		1,079.50	
2. Regional A.C.Y.O.A. (Postage)		33.00	
3. Fitchburg Educational Organization (Postage)		28.00	
4. Books & Calenders		72.75	
5. Telephone Toll Collections		133.40	
6. Fire Insurance (House Smoke Damage)		869.53	
7. Stencils		7.00	
8. Clergy Visitation (Haverhill)		155.00	
9. Bank Interests (1961)		461.78	
10. Addressograph		10.00	
11. Name Day Candles		<u>32.00</u>	
			2,881.96
TRANSFER ACCOUNT:			
Diocesan Auxiliary Committee		130.00	
Maccabee Insurance (Clergy)		<u>66.38</u>	
			196.38
NET INCOME			<u>43,556.86</u>

ARMENIAN APOSTOLIC CHURCH OF OUR SAVIOUR
OPERATING EXPENSES - 1961

A. SALARIES:			
1. Pastor		4,199.00	
2. Assistant Pastor		3,211.00	
3. Deacon		475.00	
4. Custodian		1,285.25	
5. Groundskeeper		330.00	
6. Visiting Clergy		<u>75.00</u>	9,575.25
B. ADMINISTRATIVE:			
1. Fuel		1,899.65	
2. Electric		489.71	
3. Water		86.38	
4. Pastor's Rental		780.00	
5. Telephone (Office & Pastor)		635.42	
6. Telephone (Pay Station)		10.08	
7. Printing		895.33	
8. Postage		457.98	
9. Pledge Supplies		198.26	
10. Office Supplies & Expenses		666.62	
11. Trash Removal		27.00	
12. Laundry		75.25	
13. Flowers		121.80	
14. Custodian Supplies		121.77	
15. Church Supplies (Sacramental)		213.63	
16. Building Maintenance		2,740.97	
17. Clergy Relief Fund (1960)		75.00	
18. Insurance		820.47	
19. Church Equipment & Expenses		362.36	
20. Mortgage (Parish House)		1,214.76	
21. Diocesan Conventions		<u>40.00</u>	11,932.44
C. EDUCATION & AUXILIARY:			
1. Sunday School		798.09	
2. Vocalist & Organist		395.00	
3. Etchmiadzin Student		500.00	
4. Radio Hour		289.02	
5. Choir Scholarship		<u>104.00</u>	2,086.11
D. ASSESSMENTS:			
1. Diocese Dues (1958)		928.00	
2. Diocese Dues (1961)		4,500.00	
3. Diocesan Fund		78.56	
4. Etchmiadzin		250.00	
5. Etchmiadzin Monthly & Calendars		219.00	
6. Council of Churches		<u>315.00</u>	6,290.56
E. AFFAIRS:			
1. Folk Festival		2,200.32	
2. Annual Picnic		1,015.59	
3. Archbishop Galfayan Banquet		375.00	
4. Miscellaneous Affairs		<u>132.80</u>	3,723.71
F. OTHER EXPENDITURES:			
1. In Lieu of Flowers		968.00	
2. Withholding Taxes		79.50	
3. Church Consecration (Boston)		200.00	
4. Church Consecration (Hartford)		100.00	
5. Hotel Rental		<u>61.61</u>	1,409.11
			<u>35,017.18</u>
TRANSFER ACCOUNT:			
Diocesan Auxiliary Committee		130.00	
Maccabee Insurance (Clergy)		<u>66.38</u>	196.38
			<u>35,213.56</u>

ARMENIAN APOSTOLIC CHURCH OF OUR SAVIOUR

RECAPITULATION - 1961

CURRENT ASSETS: 12/31/60	10,261.31	
NET INCOME 1961	43,556.86	
	<u>53,818.17</u>	
NET EXPENSES 1961	35,213.56	
BALANCE 12/31/61		<u>18,604.61</u>
 <u>CURRENT ASSETS:</u>		
Check Book Balance 12/31/61	986.48	
Mechanics Savings Bank	12,386.20	
Worcester Five Cents Savings	3,155.09	
Worcester County Institution For Savings (Building Fund)	1,979.25	
Worcester Federal Savings & Loan (Choir Scholarship)	<u>97.59</u>	
BALANCE 12/31/61		<u>18,604.61</u>
Check Book Balance 12/31/60	791.15	
Check Book Balance 12/31/61	986.48	
Check Book Increase	<u>195.33</u>	
 <u>CURRENT LIABILITIES</u>		
Worcester Federal Savings (Parish House Mortgage)		14,414.05

John Toromanian
Treasurer

ARMENIAN APOSTOLIC CHURCH OF OUR SAVIOUR
ANTICIPATED INCOME & EXPENSES FOR 1962

<u>INCOME</u>		
Pledges (Weekly Envelopes)	8,000.00	
Pledges (Annual)	5,000.00	
Sunday School	750.00	
Plate	2,000.00	
Yoohakin	2,000.00	
Hokehankist	2,500.00	
Momakin	750.00	
Baptisms	350.00	
Weddings	300.00	
Funerals	1,000.00	
Gifts & Bequests	1,000.00	
In Lieu Of Flowers	2,000.00	
Hall Donations	250.00	
Affairs	1,000.00	
Miscellaneous	<u>500.00</u>	
Armenian School (Collected By Committee)		27,400.00
Radio Program (Collected By Committee)		2,000.00
TOTAL		<u>1,500.00</u>
		30,900.00
<u>EXPENSES</u>		
Pastor	5,500.00	
Assistant Pastor	3,000.00	
Deacon	500.00	
Visiting Clergy	100.00	
Custodian	1,300.00	
Groundskeeper	360.00	
Fuel	2,000.00	
Electric	500.00	
Telephones	450.00	
Printing	500.00	
Postage	500.00	
Pledge Supplies	200.00	
Office Stationary & Expenses	450.00	
Custodian Supplies	100.00	
Church Supplies	300.00	
Building Maintenance	2,000.00	
Clergy Insurance & Pension	390.00	
